ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 289 -Ա «01 » օգոստոսի 2019 թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով

կարգադրում եմ՝

1.«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի N3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի փոփոխության պատճառով դպրոցի ապրանքանյութական արժեքների հանձնում-ընդունումը սահմանված կարգով կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Լյովա Խաչատրյան - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի նախագահ

Սուրեն Պետրոսյան – Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

Բուրմունք Հովհաննիսյան –Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի Մարզպետարանի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ

Արմեն Պետրոսյան - հանձնող

Աշոտ Հակոբյան- ընդունող

Վարուժան Ղարիբյան – դպրոցի հաշվապահ

2. Հանձնաժողովին՝ /նախագահ՝ Լյովա Խաչատրյան/ ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման աշխատանքներին ընդգրկել նաև դպրոցի նյութական պատասխանատու անձանց և համապատասխան ակտերը մեկ շաբաթյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան:

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք.Գավառ